

J. CARSWELL and C. DOWSETT, Kūtahya tiles and Pottery from the armenian cathedral of St. James, Jerusalem, vol. I, II, Oxford, 1972.

Ժ. ՔԱՐՍՎԵԼ և Ս. ԴՈՎՍԵԹ, Երուսաղեմի Ս. Հակոբի վանքը զարդարող կուտիեական հախճապներն ու խեցեղենը. *Օքսֆորդ. 1972, հ. I, 111 էջ, հ. II, 106 էջ:*

Կուտիեյան XVI—XIX դդ. հռչակված խեցեգործական կենտրոն էր, որի անդրանիկ ուսումնասիրողներն ու գիտական շրջանառություն մուծողներն են Մերձավոր Արևելքի մշակույթի գիտական Ա. Լեյնը¹, Օ. Դորնը², Ռ. Հոբսոնը³, Յու. Միլլերը⁴ և ուրիշները: Նույնիսկ հարցի մասնակի քննության շրջանակներում, նրանց հաջողվել է հասնել զգալի նվաճումների: Նշված հետազոտողների աշխատություններում իբրեւ ինքնուրույն հայկական ազգային նկարագրով խեցեղեն արվեստի բնագավառ Կուտիեյան հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել: Բացի այդ, տակավին չկար աշխարհի տարբեր թանգարաններում սփռված առարկաներն ամփոփող կուռ ու համակողմանի ուսումնասիրություն: Ահա այդ շատ կարևոր ու պատվաբեր աշխատանքը կատարել են Ջ. Քարսվելն ու Ս. Դովսեթը, որոնց բազում տարիների համատեղ աշխատանքի ու գիտական լուրջ պրպտումների արգասիքն է գրախոսվող երկհատոր աշխատությունը:

Ժ. Քարսվելի ու Ս. Դովսեթի ջանքերի շնորհիվ հայ մշակույթի պատմության խնդիրներով զբաղվողն ստացավ գիտական բարձր մակարդակով ու մեթոդական նորազույն եղանակներով գրված մի ուսումնասիրություն, ուր առաջին անգամ հայկական գեղարվեստական խեցեղենի նշանավոր օջախ Կուտիեյան ներկայացված է նյութի լայն ընդգրկումով ու գնահատված ըստ արժանվույն:

Գրախոսվող հետազոտության շարադրանքը հենված է փաստական հարուստ նյութի, աղբյուրների ու նրա հետ առնչվող համապատասխան գրականության վրա: Աշխատության I հատորը բաղկացած է նախաբանից ու հինգ գլուխներից. ներածություն, որը փաստորեն աշխատության I գլուխն է (I, էջ 1—11), Հախճապների նկարագրություն (II, էջ 12—26), Հախճապների մակերեսը եզերող արձանագրությունների վերծանություն (III, էջ 27—68), Անոթները զարդարող արձանագրությունների բնութագիր (IV, էջ 68—78), Կուտիեյայի խեցեղենի ընդհանուր կատալոգ (V, էջ 78—106): Ներածության մեջ ասվում է, որ հայերը Երուսաղեմ են մուտք գործել դեռ Վերածննդի ժամանակներից, իսկ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Նրուսաղեմը հայերի համար ճանաչված ուխտատեղի էր: Այնուհետև ընթերցողը ծանոթանում է Երուսաղեմի հոգևոր ու աշխարհիկ շենքերի նկարագրին, տեղեկանում հայոց պատրիարքարանի հիմնադրման մանրամասնություններին, միմյանց փոխհաջորդած պատրիարքների գործունեությանը և այլն:

Երուսաղեմի հայկական գաղութի ու հոգևոր կենտրոնի կազմավորմանը նվիրված ներածությունը կարևոր լինելով հանդերձ, նկատելիորեն ձգձգված է: Ցանկալի էր հիշյալ բաժինն ավելի ամփոփ ներկայացնել:

Աշխատության II գլուխը նվիրված է Կ. Անդրեասյանի ջանքերով ի մի բերված հախճապների քննությանը: Հեղինակների որոնումների շնորհիվ Սերի թանգարանի հավաքածուում գտնվել են պակասող սալերից երկուսը և Սուստիելին պատկանող սալերից մեկը, որի հետևանքով այդ նշանավոր հավաքածուն ամբողջացել է: Հեղինակներին հաջողվել է հմտորեն դաս դասել, խմբավորել հախճապներն ու ստեղծել մի կայուն համակարգ: Ձևով իրարից շտար-

¹ A. Lane, Later Islamic pottery Persia, Syria, Egypt, Turkey, London, 1957; „Turkish peasant pottery from Chanak and Kutahya“—„The connoisseur“, vol. X, 1939.

² K. Otto-Dorn, Das Islamische Iznik-Istambuler Forschungen, Bd. 13, Berlin, 1941.

³ R. Hobson, A guide to the Islamic pottery of the Near East, London, 1932.

⁴ Ю. Миллер. Художественная керамика, Турция, Л., 1972.

բերակվող հախճապները դասակարգելիս նրանք իրավացիորեն առաջնորդվել են գերազանցապես թեմատիկայով: Այդ սկզբունքով ընդգրկված 45 սալերից 8 ամփոփված է Ա խմբում և բովանդակում է Հին կտակարանի թեմաներ, իսկ եզրերին երկաթագիր արձանագրություններ կան: Ե խմբի մեջ դասավորված է 27 հախճապ՝ նկարազարդված նոր կտակարանի թեմաներով, իսկ արձանագրությունները բոլորագիր են: Ը խմբի մեջ է մտնում մնացած 10 սալը՝ խալտարդետ սյուժեներով (կան Հին և նոր կտակարանից դրվագներ, վարքագրական պատկերներ):

Հետադոտոթյան ամենակարևոր արդյունքներից մեկն այն է, որ հայ մատենագրությանն ու մանրանկարչությանը քաջատեղյակ հեղինակները անոթների ու հախճապների վրա հանդիպող միատեսակ գրություններին հետևելով կարողացել են խմբավորել ու ներկայացնել ժամանակի վարպետների, պատվիրատուների ու նկարիչների գործերը:

Հայտնի է, որ Թեքիրդաղ քաղաքի հոգևոր առաջնորդ Աբրահամ Կրետացին 1719—1721 թթ. եղել է Նորաշենյան: Աշխատությունից պարզվում է, որ այցելության ժամանակ նա վանքին նվիրել է հինգ թաս ու մի քանի շքադուռ (էջ 13), որոնց շնորհիվ մեզ հայտնի են դառնում դրանք զեղազարդող նկարիչներ թոքատցի Հովհաննեսի, Միքայելի և Թորոսի բարձրարվեստ գործերը:

Աշխատությունը մեծապես շահել է առարկաների պատկերազարդումների հմտալից նկարագրությամբ: Մասամբ փորձ է արվել որոնելու տարբեր մոտիվների ակունքները: Ինչ խոսք, Եստադոտոթյան այս բաժնի շարադրանքն անհնարին էր առանց հայոց մշակույթի պատմության ու մասնավորապես զարդարվեստի խորիմացություն: Այդ առումով, իբրև բաղդատական նյութ, աշխատանքում բաղվածքներ կան միջնադարյան հայկական դաշածո կտավներից: Ցավոք, հեղինակները ջանքեր չեն գործադրել բացահայտելու Կուտինայի ու բուն Հայաստանի մշակութային կապը, մինչդեռ Նրուսագեմի սյուժետային (հ. I, աղյ. 12, նկ. 11, 12, աղյ. 10, նկ. 2) ու դեկորատիվ (հ. II, աղյ. 14, նկ. 66, 66a, 67, աղյ. 10, նկ. 14, 14a, 16, 16a, 16b, 16c) սալերի վրա առկա են այնպիսի մոտիվներ (ոճավորված ցողունազարդ, երկրաչափական ու բուսական զարդեր), որոնց անմիջական զուգահեռները պիտի որոնել Հայաստանի IX—XIV դդ. հուշարձաններից (Անի, Դվին, Գառնի) ի հայտ եկած նյութերի մեջ (խեցեղեն, զեղարվեստական մետաղ, փայտե ու գիպսե փորագիր քանդակներ և այլն):

Կուտինաճայերի տարազի մասին մեր պատկերացումները կցկտուր, թերի էին, սակայն, ի պատիվ գրախոսվող հետազոտության հեղինակների, պետք է ասել, որ նրանք արժարժեք են այդ կարևոր հարցը և տվել զգեստների նկարագիրը (հ. I, էջ 17—23): Հատկանշական է, որ նրանք չեն բավարարվել սոսկ նկարագրություններով և հաճախ դիմել են ընդհանրացումների, երբեմն համառոտակի ներկայացնելով հայ զեղուկի և կամ հոգևորականի զգեստը (էջ 18, 21):

Ցանկալի էր, որ զգեստների աղբյուրներն առաջին հերթին վկայակոչվեին ոչ թե թուրքական, ինչպես արված է (էջ 21), այլ հայկական աղբյուրներից (մասնավորապես Թորոսի նկարազարդած պատկերներում այդ հարցի վերլուծության համար առատ նյութ կա):

Ուսումնասիրվող խեցեղենի մակերեսին երբեմն (հ. I, աղյ. 20, աղյ. 9, նկ. 25, աղյ. 19) վերարտադրված են եկեղեցիների մոդելներ, որոնք մեկնաբանվում են իբրև ուխտավորների եկեղեցական նվիրատվությունների կերպարանավորում: Այստեղ հարկ էր վկայակոչել հայկական այն հուշարձանները, որոնց արտաքին հարդարանքի անբաժան մասն են կազմել եկեղեցիների մոդելները (Աղթամար, Մանհին, Հաղբատ, Հառիճավանք, Գանձասար, Անիում գտնված Գագիկ Բագրատունու արձանը՝ եկեղեցու մոդելը ձեռքին ու Միսիանի շրջանից հայտնաբերված եկեղեցիների առանձին մոդելները): Միայն այդ պարագայում պարզ կդառնար, որ Կուտինայի խեցեղենի վրա վերարտադրված եկեղեցիների պատկերները ոչ թե պատահական, այլ դարավոր անցյալից եկած հայկական սովորույթի դրսևորումներ են:

Աշխատության II հատորը գրվել է առարկություն շահարուցող աղբյուրների՝ հայերեն արձանագրությունների, պատմական աշխատությունների և վավերագրական հարուստ փաստաթղթերի (Ֆէրմաներ, դեֆտերներ) քննության հիման վրա: Այն բաղկացած է 5 ընդարձակ գլուխներից, որոնցից առաջինը նվիրված է Կուտինայի պատմա-աշխարհագրական միջավայրին: Այստեղ նաև տրվում է Կուտինայի հայաբնակ օջախի հիմնադրման ու ծաղկման մանրամասն պատմությունը, որի համաձայն հայերն այստեղ բնակվել են XIV դ. սկսած ու հետզհետե կազմել բնակչության զգալի հատվածը:

Հատորը պատրաստելիս հեղինակները նպատակ են ունեցել անդրադառնալ երկու կարևոր խնդրի՝ ցույց տալ, թե երբ է Կուտինայում կազմակերպվել զեղարվեստական խեցեղենի ար-

տաղրությունը և զարգացման ինչպիսի՝ փուլեր է անցել այն: Այս հարցերը լուսաբանված են հատորի II—IV գլուխներում:

Մինչև վերջերս մասնագիտական գրականության մեջ տիրապետում էր այն տեսակետը, թե Կոտինայում խեցեղենի արտադրությունը սկզբնավորվել է XVII—XVIII դդ.: Գրախոսվող ուսումնասիրության հեղինակները, վիճարկելով այդ տեսակետը, ստեղծել են Կոտինայի խեցեղենի ժամանակագրական կայուն աղյուսակը. առաջին փուլ՝ XVI—XVII դդ., երկրորդ փուլ՝ XV—XVI դ. (վերելքի շրջան), երրորդ փուլ՝ XIX դ. մինչև նորագույն շրջան: Այնուհետև աստիճանաբար լուսաբանվել են յուրաքանչյուր էտապի նկարչական կատարման մակարդակը, ժամանակի առաջադիմության հետ թեմատիկ փոփոխությունները և այլն: Ի դեպ, Դոգմանի անհատական հավաքածուում պահվող անոթի սերումը տեղիք է տվել իրարամբժ հետևություններին: Այդ անոթը սահմանափակ է և գունազարդված է կոթալտի մեղմ երանգով, որը չենթակ ֆոնի հետ ստեղծել է գույների ներդաշնակ համադրություն: Անոթի հիմնական զարդարանքը տարբեր բնույթի՝ երկրաչափական, բուսական, արձանագրական մի քանի գոտիներն են (հ. I, աղյ. 21, նկ. 26, հ. II, աղյ. 39, նկ. 6): Պարանոցը բոլորում է մի շափածո արձանագրություն:

տր. Մարտիրոս յեպիսկոպոս

Խապար խրկեց ի Քոթայքս:

Սբ Ածածին խրկէք ի հոս՝

Բարով բռնէ տր. Մարտիրոս:

Ի թվ[ի]ն 22Ը մարտի ԺԸ գրվեց այս սուրահին 1529 մարտի 18 (հ. I, էջ 79):

Վերջին՝ ամենալայն գոտին զետեղված է անոթի իրանի վրա. ծաղիկներով ու տերևներով ծանրաբեռնված պարուրները կանոնավոր ձևով տեղադրված են իրանի շուրջը: Մինչև վերջերս մասնագետները գտնում էին, որ հայկական արձանագրության բնույթից ու բովանդակությունից անկախ այդ անոթը կերտվել է Իզնիկ (Նիկեա) քաղաքում: Նման ենթադրության կուլանն այն էր, որ պեղումների ժամանակ նույնօրինակ անոթների բեկորներ են գտնվել հիշյալ քաղաքի շրջակայքից: Ա. Լեյնը անոթը գոտևորող բուսական մոտիվն անվանում է ռուկեղլուր զարդա և վերագրում 1525—1550 թթ.: Զանտեսելով հայրենի արձանագրությունը, նա ավելացնում է, թե այն հավանաբար պատրաստվել է Իզնիկում և հայ վարպետների գործ է: Այս տարակարծություններին վերջ են տալիս գրախոսվող աշխատության հեղինակների նախաձեռնությամբ կատարված քիմիական և սպեկտրալ անալիզի տվյալները:

Նմուշներ	Al	Mg	Fe	Ti	Mn	Cr	Ca	Na	Ni
Կոտինայի առաքյալներ									
1 Դոգմանի սեփականության 1510 տարեթիվը կրող սահման	0,94	1,1	0,77	0,12	0,0086	0,015	3,7	2,4	0,27
2 Դոգմանի սեփականության 1529 տարեթիվը կրող սահման	1	1,4	0,65	0,13	0,0087	0,028	4,8	2,2	0,022
Իզնիկի բեկորներ									
1 1600 տարեթիվը կրող բեկոր	0,40	0,48	0,52	0,1	0,0080	0,021	2,8	1,2	0,76
2 1650 տարեթիվը կրող բեկոր	0,56	0,72	0,80	0,1	0,0088	0,016	4,1	1,3	0,9

³ A. L a n e, The Ottoman pottery of Iznik-Ars Orientalis, 1957, II, p. 225. 270; I, pic., 27, 28, 33, 34. R. L. H o b s o n, նշվ. աշխ., էջ 81. A. S a r k i s s i a n, Pages d'art armenien, Paris, 1940, p. 107—108, A s i a n a p a O k t a y, Osmanlılar Devrinde Kutahya çinileri, İstanbul, 1949, p. 96.

Ինչպես երևում է անալիզների արդյունքներից, 1529 տարեթիվ կրող անոթը հայ վարպետի գործ է և կավի թիմիական բաղադրությամբ միանգամայն համապատասխանում է Կուտինայի ուշ շրջանի խեցեղենի բաղադրությանը:

Հեղինակների տեսադաշտից չի վրիպել նաև Թոփ Կարու հարեմի, Հիսաբ Բեյի, Հաջի Բայրամ (Անկարայում), Կոնիայի Նագի-Բողլու, Կայսերի Ուլու մղկիթները զարդարող շքազյուսների բնութագրումը (էջ 15): Դրանք պատրաստվել են ժամանակի թուրքական արքունիքի պատվերով և վկայում են հայ վարպետների մեծ հեղինակության մասին: Աշխատության II հատորին ես կցված է կատալոգ, ուր առարկաները դասակարգված են ըստ կիրառական նշանակության՝ խնկամաններ, ջահեր, կախովի զարդեր և այլն: Ցանկալի էր այս հարուստ նյութերի ցուցակում ամփոփել Հայաստանի պատմության թանգարանում ցուցադրվող 16 կախովի զարդերը, Լենինգրադի պետական էթնոգրաֆի տարատեսակ անոթներից բաղկացած հավաքածուն ու էջմիածնի կաթողիկոսարանին պատկանող առարկաները: Հետազոտությունն ավարտվում է առարկաների վրա վարպետների արած նշանների աղյուսակով և ճարտարապետական-չափագրական բազմաթիվ գծագրերով:

Աշխույժ շարադրանքի, հստակ ու պարզ ոճի շնորհիվ աշխատությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Այն ձևավորված է բարձր ճաշակով, օժտված անթերի լուսանկարներով ու գծանկարներով: Ցանկալի էր նաև, որ հեղինակները առավել ուշադիր լինեին արձանագրությունների վերծանումներին, ուր թիվ չեն տեղի խոսակցական լեզվի արտացոլումները, բայց ոչ միշտ ստույգ ընթերցված: Այսպես, օրինակ.

Էջ Ընթերցված է

Պիտի լիճի

14 Վարդապետ

վարդապետ

31 Ի Կ[րետացուց]

Ի Կրետացուց]

32 զանազան

զանազան

33 Պողոսին

Պուլո[ս]ին

34 սաղմոս

սաղմոսն

եկի

եկել

այլազգի

այլազգիս

Ռում[մ]միէ

Ռում[մ]յաէ

շինեցա[ն]

շինեցա[ն]

յառաջ

յառաջ

35 բանա[յ]

բանա

37 բեռէն

բերէն

38 հոգու

հոգոյ

39 համբուրելով

համբուրելով

41 պատանա տեղ

պատանա տեղ

44 զգլուխն

զգլուխն

45 յայսմ

յայսմի (կամ՝ յայս մի)

47 բազմե[ա]

բազմել

47 ...ելի Տիրացու

...ելի Տրդի տիրացու

58 որդախն (բու որդույն)

որդախն (իմա՝ օրթաղ)

60 Մարիամա

Մարիամ[ա]

Այսպիսով՝ գրված է մի հաջողված ուսումնասիրություն, որի կարիքը վաղուց էր զգացվում: Այն արժանի ներդրում է հայ մշակույթի պատմության մեջ: Ավելացնենք, որ բուն հայկական նյութի ըստ ամենայնի օգտագործումը ավելի կբարձրացնեք աշխատության արժանիքը:

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ